

ՉՔՆԱՂ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՎԱԾ ՕԾՈՒՄԸ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԺԵԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆՆԵՐԻՆ




# ՕԾՎԵՑ ՉՔՆԱՂ ԳՅՈՒՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Հունիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Արագածոտնի թեմ՝ օծելու Չքնաղ գյուղի նորակառույց Ս. Ստեփաննոս եկեղեցին: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանը, Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը, Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ:

Մասունիկ գյուղի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին ու իր շքախմբին դիմավորեցին Արագածոտնի մարզպետ Գագիկ Գյոզալյանը և մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Չքնաղ գյուղում եկեղեցի կառուցելու որոշումը կայացվել էր Վեհափառ Հայրապետի անմիջական մասնակցությամբ: Երկու տարի առաջ Նորին Սրբությունն այցելելով հնամենի այս գյուղ, այցելեց նաև գյուղի խոնարհված եկեղեցու ավերակներ, եղավ գյուղացիների համար սրբատեղի դարձած այն վայրում, որ համագյուղացիների բարեպաշտական զգացումներին գոհություն տալու համար կառուցել էր Գառնիկ Հովսեփյանը: Վերականգնել պատմական եկեղեցին, որի հիմքերը հասնում են մինչև 7-րդ դար, այլևս անհնար էր: Որոշվեց կառուցել նորը՝ խոնարհված եկեղեցու հարևանությամբ:

Եկեղեցու կառուցման բարերարը դարձավ պեր և փիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյանների բարեպաշտ ընտանիքը:

Երկու տարի անց ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ուղեկից Սրբազան Հայրերի սրբագործվեց նորակառույց եկեղեցին:

«Մեր կյանքը որպես ազգ, որպես ժողովուրդ խարսխված է Քրիստոսի սուրբ հավատքի վրա, և մեր հարատևությունը պայմանավորված է մեր այս լուսեղեն հավատքով: Այսօր մենք գոհություն և փառք ենք տալիս, որ ևս մեկ եկեղեցի է վեր հառնում՝ իր դռները լայն բացելով մեր հավատացյալ զավակների առջև, որպեսզի այս եկեղեցիների կամարների ներքո մեր հավատացյալ հայորդիներն իրենց աղոթքը բարձրացնեն և իրենց հավատարմության ուխտը կապարեն մեր հայրերի սուրբ հավատքին ու մեր ազգային նվիրական սրբություններին, որպեսզի մենք շարունակենք դարեր ձգվող անհատնում մեր ընթացքը որ-

պես ազգ, որպես ժողովուրդ, որպես պետություն և եկեղեցի»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում հավարտ օծման սրբազան արարողության:

Վերջում Վեհափառ Հայրապետը, ի գնահատություն տեր և տիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյանների նվիրական այս ձեռնարկի, նրանց պարգևատրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս էջ 29):

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորակառույց եկեղեցուն նվիրեց նաև երկու տերունական պատկերներ, ապա օծված եկեղեցում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*